ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացվել է «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ նաև՝ Նախագծերի փաթեթ): Նախագծերի փաթեթով նախատեսվում է ներդնել և սահմանել քաղաքացիների կամավորության սկզբունքով աշխարհազորային համակարգի հասկացությունը և վերջինիս հետ կապված իրավական կարգավորումները: Նախագծերի փաթեթին կից ներկայացված հիմնավորմամբ համապատասխան լրացումների անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը համընդհանուր և համազգային բնույթ հաղորդելու, հավանական հակառակորդի ցանկացած ոտնձգություններին արժանի և պատշաճ հակահարված տալու նպատակով քաղաքացիների կամավորության սկզբունքով աշխարհազորային համակարգի ներդրման և կազմակերպման անհրաժեշտությունից, որոնք, որպես միասնական ղեկավարության ներքո գործող ուժերի և միջոցների համախումբ, պատերազմի ժամանակ ի զորու կլինեն հակառակորդի հավանական գործողություններից հուսալիորեն պաշտպանելու երկրի տարածքը, բնակչությունը, կարևորագույն օբյեկտներն ու ենթակառուցվածքները:

Նախագիծը մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում: Նախագիծը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում են մասնագիտական փորձաքննության եզրակացությունները, ինչպես նաև Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՆԻ ՄՈՒԹԱՖՅԱՆ

28.10.2020թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-772-27.10.2020-ՊԱ-011/0), «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-772[1]-27.10.2020-ՊԱ-011/0), «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-772[2]-27.10.2020-ՊԱ-011/0) և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-772[3]-27.10.2020-ՊԱ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ միասին նաև՝ Նախագծերի փաթեթ) իրավական փորձաքննության են ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետաիրավական փորձաքննության բաժնում:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծերի փաթեթի (հիմք՝ Ազգային ժողովի պաշտոնական կայքում հրապարակված Նախագծերի փաթեթը) վերաբերյալ հարկ ենք համարում կատարել հետևյալ դիտարկումները.

1. Առաջարկում ենք «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) հոդվածները համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասին՝ հոդվածների համարներից առաջ նշված «ՀՈԴՎԱԾ» բառը նշելով հետևյալ կերպ՝ «Հոդված»: Նույն առաջարկը վերաբերելի է նաև «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի հոդվածներին:

2. Առաջարկում ենք Նախագծի վերնագրում նշված երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը: Նույն առաջարկը վերաբերելի է նաև «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի վերնագրերում նշված երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» բառերին:

Նույն հիմքով առաջնորդվելով՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում օրենքի վերնագրից հետո նշված «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել: Նույն առաջարկը վերաբերելի է նաև «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի 1-ին հոդվածներում նված օրենքների վերնագրերին:

3. Առաջարկում ենք Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածների մասերի համարակալումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերին՝ մասերի համարները տեքստից առանձնացնելով միջակետերով:

4. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասով լրացվող «Պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 9.1-ին կետով նախատեսված աշխարհազորի հասկացության մեջ նախատեսվում է աշխարհազորի մասնակցությունը **Հայաստանի Հանրապետության զինված պաշտպանությանը**: Մինչդեռ Օրենքում, այդ թվում նշված օրենքի 5-րդ հոդվածում, որը վերաբերում է պաշտպանության կազմակերպմանը, տարանջատված չէ զինված կամ այլ տեսակի պաշտպանություն: Հետևաբար, ապահովելով հասկացությունների միատեսակ կիրառությունը և լրացվող դրույթի տրամաբանությունը, առաջարկում ենք շեշտադրել ոչ թե զինված պաշտպանությունը այլ զինված հարձակումից պաշտպանությունը, օրինակ՝ «**Հայաստանի Հանրապետության զինված պաշտպանությանը**» բառերը փոխարինել «**Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը զինված հարձակմումից** » բառերով:

5. Նախագծի 1-ին հոդվածով նախատեսված է «աշխարհազոր» հասկացության սահմանումը, միչդեռ Նախագծի այլ հոդվածներում կիրառվում են նաև «աշխարհազորային» կամ «աշխարհազորի համակարգ» հասկացությունները: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ առաջարկում ենք միևնույն միտքն արտահայտելիս կիրառել նույնական հասկացությունները կամ նշված նոր հասկացությունների սահմանումները:

6. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված լրացման արդյունքում դրույթը շարադրվում է հետևյալ կերպ՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպումը **խաղաղ ժամանակ** ներառում է (…) **աշխարհազորի համակարգի ստեղծումը**»: Այսինքն՝ նշված լրացմամբ նախատեսվում է աշխարհազորի համակարգի ստեղծում, ընդ որում սահմանված չէ վերջինիս հասկացությունը, նաև խաղաղ ժամանակ, մինչդեռ Նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 29.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **«Աշխարհազորը** Հայաստանի Հանրապետության *վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների պայմաններում Հայաստանի Հանրապետության զինված պաշտպանությանը կամավորության սկզբունքով քաղաքացիների մասնակցության համակարգ է:*» Այսինքն՝ նշված դրույթի բովանդակությունից բխում է, որ աշխարհազորը, որպես *Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը կամավորության սկզբունքով քաղաքացիների մասնակցության համակարգ, փաստացի գոյություն չունի և* ստեղծվում է այն ժամանակ, երբ անհրաժեշտություն է առաջանում կամավորության սկզբունքով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ռազմական գործողությունների դեպքում: Հետևաբար, հակասական կարգավորումներից խուսափելու նպատակով, առաջարկում ենք Նախագծով նախատեսել միմյանց համապատասխանող կարգավորումներ:

7. Նախագծի 6-րդ հոդվածում նշված «զորակոչը» և «աշխարհազորը» բառերն անհրաժեշտ է նշել մեծատառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասը և 34-րդ հոդվածի 3-րդ մասը:

8. Նախագծի 7-րդ հոդվածով լրացվող Օրենքի 29.1-ին հոդվածի 9-րդ մասում նշված «հոդվածներով» բառն առաջարկում ենք փոխարինել «մասերով» բառով:

9. Նախագծի 7-րդ հոդվածով լրացվող Օրենքի 29.1-ին հոդվածի 10-րդ մասում առկա է վրիպակ, այն է՝ «բրիղադների»:

10. Նախագծի 8-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը:

11. Առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասում նշված «պաշտոնական հրապարակման օրվանից՝ անմիջապես» բառերը փոխարինել «հրապարակվելուց հետո՝ անմիջապես» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը: Նույն առաջարկը վերաբերելի է նաև «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի 3-րդ հոդվածով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածով սահմանված ձևակերպումներին:

12. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է Նախագծով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման ժամկետը, և, առաջնորդվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով, առաջարկում ենք Նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «կարգավորումները» բառը փոխարինել «ենթաօրենսդրական նորմատիվ կրավական ակտերը» բառերով:

13. «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերով աշխարհազորային զորամիավարմանը և աշխարհազորային բրիգադին վերաբերող կարգավորումներում կիրառում է « աշխարհազորային պայմանական զորամիավորում» և «աշխարհազորային պայմանական բրիգադ» հասկացությունները: Հիմք ընդունելով Նախագծի 7-րդ հոդվածով լրացվող Օրենքի 29.1-ին հոդվածի 6-8-րդ մասերը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝ առաջարկում ենք Նախագծերի փաթեթում կիրառել նույնական հասկացությունները:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ հարկ ենք համարում նշել, որ պայմանավորված Նախագծերի փաթեթի՝ Կառավարության նախաձեռնությամբ գումարված արտահերթ նիստի օրակարգում ընդգրկված լինելու հանգամանքով և Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության պետահրավական փորձաքննության բաժնի ծանրաբեռնվածությամբ՝ Նախագերի փաթեթը ամբողջությամբ չի

ուսումնասիրվել, ուստի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքների պահանջներին Նախագծերի փաթեթի համապատասխանության վերաբերյալ միանշանակ եզրահանգում չի կարող ներկայացվել:

Միաժամանակ առաջարկում ենք վերոգրյալ դիտարկումների հիման վրա ապահովել Նախագծերի փաթեթի համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքին և Նախագծերի փաթեթում ընդգրկված նախագծերով սահմանված կարգավորումների համապատասխանությունը միմյանց:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՆԻ ՄՈՒԹԱՖՅԱՆ

Կատարող՝ Զ. Հովասափյան (հեռ.՝ 011-513-248)
28.10.2020թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՆԻ ՄՈՒԹԱՖՅԱՆ

Կատարող՝ Զ. Հովասափյան (հեռ.՝ 011-513-248)
28.10.2020թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-772-27.10.2020-ՊԱ-011/0), «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-772[1]-27.10.2020-ՊԱ-011/0), «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-772[2]-27.10.2020-ՊԱ-011/0) և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-772[3]-27.10.2020-ՊԱ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը (այսուհետ՝ Նախագծերի փաթեթ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչության ֆինանսատնտեսագիտական փորձաքննության բաժնում:

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

1. Նախագծերի փաթեթով առաջարկվում է սահմանել աշխարհազորի հասկացությունը, նպատակները, կառուցվածքը, ձևավորման կարգը, խաղաղ և պատերազմի ժամանակ աշխարհազորի պատրաստության և կիրառման, ենթակայության և ղեկավարման, աշխարհազորայինների հավաքագրման հետ կապված հարաբերությունների կարգավորումները:

Նախագծերի փաթեթը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրներ չի պարունակում:

2. Նախագծերի փաթեթի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագծերի փաթեթը ֆինանսատնտեսական հիմնահարցերի տեսանկյունից լրամշակման կարիք չի զգում:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԱՐԹՈՒՐ ԹԱՍԱՉՅԱՆ

Կատարող՝ Գ. Կիրակոսյան (հեռ.՝ 011- 513-603)

28.10.2020թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-772-27.10.2020-ՊԱ-011/0), «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-772[1]-27.10.2020-ՊԱ-011/0), «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-772[2]-27.10.2020-ՊԱ-011/0) և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-772[3]-27.10.2020-ՊԱ-011/0) վերաբերյալ

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը (այսուհետ միասին՝ Նախագծերի փաթեթ) մասնագիտական փորձաքննության են ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական սոցիալ, կրթական, առողջապահական փորձաքննության բաժնում:

Սոցիալական փորձաքննության արդյունքները

1. Նախագծերի փաթեթով առաջարկվում է սահմանել աշխարհազորի հասկացությունը, նպատակները, կառուցվածքը, ձևավորման կարգը, խաղաղ և պատերազմի ժամանակ աշխարհազորի պատրաստության և կիրառման, ենթակայության և ղեկավարման, աշխարհազորայինների հավաքագրման հետ կապված հարաբերությունների կարգավորումները:

2. Նախագծերի փաթեթը սոցիալ, կրթական, առողջապահական բնույթի հիմնախնդիրներ չի պարունակում:

3. Նախագծերի փաթեթի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

Եզրահանգում

Նախագծերի փաթեթը սոցիալ, կրթական և առողջապահական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՖՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Ա. Գալստյան (հեռ.՝ 011-513-235)

28.10.2020թ.